

Ար. Վարդյան

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ¹

«Հնդեվրոպական լեզվաբանությունը—դա արյուն է արյունից, ոսկր է ոսկրից մեռնող բուրժուական հասարակայնության, որ կառուցված է եվրոպացիների կողմից իրենց դադութային քաղաքականությամբ արևելյան ժողովուրդներին ճնշելու վրա»:

«Հնդեվրոպական լեզվաբանությունը մարդկային հմքավորումների՝ կրոնական հիմքերի վրա կատարված ստորաբաժանումը փոխարինեց լեզվաբանականով, առանձնացրեց լեզուների հնդեվրոպական շրջանը և նվիրվեց հնդեվրոպական ժողովուրդների առանձին ուսումնասիրության խորացմանը... նա դավանող աստվածաբանության ունեցած հայացքը ընտրյալ ցեղերի նկատմամբ տեղափոխեց չորանց՝ հնդեվրոպական ժողովուրդների, հնդեվրոպական ռասայի վրա, որ իր տարբերակներով լցրել էր ամբողջ աշխարհը»:

Այս խոսքերով ասված է ամեն ինչ. հնդեվրոպական լեզվաբանությունն ստացել է իր արժանի գնահատականը: Հնդեվրոպական լեզվաբանությունը 19-րդ դարի հորինվածք է. բուրժուական իդեալիստական փիլիսոփայության սկզբունքների վրա կառուցված մի դիտություն, ուստի նրա տեսական հիմունքները, անվերապահորեն ասած, իդեալիստական են և բազմաթիվ խնդիրներում հաբ և նման ու զուգահեռ աստվածաբանության: Ինչ լոկ մեղադրանք չէ և ոչ մերկախոս վիրավորանք, այլ ոեալ վիճակից ելնող կարծիք: Աստվածաբանության կողմից ընդունված Ադամի լեզվի տեղ հնդեվրոպաբանությունը դնում է նախամայր լեզուն կամ նախամայր լեզուների նախամայրը: Բարեկոնի աշտարակաշինության ժամանակ լեզուների բաժանման աստվածաբանական տեսության տեղը բուրժուական դիտությունը դնում է լեզուների անջատումն ու բաժանումը նախամայր լեզվից: Աստծու ընտրյալ ժողովրդի ե արհամարհված կամ երկրորդական ժողովուրդների՝ աստվածաբանական տեսության փոխարեն այդ դիտությունը դնում է հնդեվրոպական համարվող բարձր ռասան ի տարբերություն մարդկային մյուս հատվածներից, որոնք համարվում են ավելի ստորադաս: Նախախնամության կողմից երևույթների կանխորոշվածության տեսության տեղը այդ դիտությունը դնում է ռասայի լեզվի անխառնության և հնչյունական փոփոխությունների կույր, կանխորոշված կարգով սահմանված օրենքները և այլն, և այլն:

¹ Զեկուցված է Հայկական ՍՍՌ ԳԱ 1947 թվի հոբելյանական սեսիայի նոյեմբերի 20-ի նիսանում:

² Н. Я. Марр—Избранные работы, т. I, стр. 222.

³ Ibid., стр. 92.

Հնդեվրոպարանությունը իր ծագումն չբացահայտելու 19-րդ դարում, 20-րդ դարի նրա ներկայացուցիչները ոչինչ չեն ավելացրել նրա տեսական հիմունքների վրա, այլ միայն 20-րդ դարի պրոգրեսիվ հայացքների տակ մերկացող նրա սկզբունքները փորձել են քողարկել, սքողել կամ հարմարեցնել գիտական նոր իրադրությունը: Այսպես, օրինակ, հայտնի լիզվարան Մեյիսի աշակերտը՝ Վանդերիսը, ուզում է մեզ հավատացնել, թե «մի լեզու մյուսից չի ծնվում...»¹, բայց երկար դեռ ու դեռ ընկնելուց հետո եզրակացնում է. «...բարեբախտաբար լեզուների մեծ մասի ազգակցությունը... որոշված է մեծագույն ճշտությամբ»:² Պարզ է, որ հնդեվրոպարանության այժմյան կորիֆեյը նեղ տեղն է ընկել, անլուծելի հակասության մեջ, որից դուրս գալու նա ի վիճակի չէ: Ուստի ե տերտերականությունը շարունակում է մնալ հնդեվրոպարանության հիմնական հատկանիշը, նրա error fundamentalis-ը:

Նույն 19-րդ դարի կեսի սոստերքը առաջացավ պրոլետարիատի փրկիսոփայական գիտությունը՝ մարքսիզմը: Այդ գիտությունը չէր հանդիսանում մի տեսակ շարունակությունը փրկիսոփայության ողջ պատմության, այլ դա գիտական ռևոլուցիա էր՝ հիմնված մեծ հայտնագործության վրա, հայտնագործություն, որ իր նշանակությամբ գերազանցում էր բոլոր տիպի ու տեսակի հայտնագործություններին: Այդ հայտնագործությունը պատմական մատերիալիզմի օրենքներն էին, որով գիտական մտքի առաջ պարզվում էին մարդկության պատմության զարգացման ճշմարիտ օրինաչափությունները: Այդ փրկիսոփայության՝ մարքսիզմի փրկիսոփայության լույսի տակ մարդկային հասարակության պատմությունը երևաց իր իսկական պատկերով: Ի՞նչ թիվս բաղաժամիվ այլ հարցերի նաև պարզվեց, որ մարդկային հասարակական միավորումները, որոնք ընդունում են տոհմի, ցեղի, ժողովրդի, ազգի ձևեր, պատմական կատեգորիաներ են՝ որոշ ժամանակաշրջանում առաջացած, և զրանց առաջացման որոշող պատճառը արտադրողական ուժերի զարգացման այս կամ այն աստիճանն է: Հասարակական միավորը՝ ցեղ, տոհմ, ժողովուրդ, ազգ, ունենում են հասարակական ծնունդ, հասարակական կյանք և հասարակական մահ, որոնք պայմանավորված են արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանով, այդ ուժերի մեջ առաջացած որակական փոփոխություններով: Որոնք բարձրացնում են հասարակությունը զարգացման նոր աստիճանի վրա, որ և բերում է հին հասարակության մահը ե նորի ծնունդը: Այսպիսով մարդկությունը ռասայորեն ե բիոլոգիորեն չէ, որ ապրում է իբրև մարդ: Նա ապրում է բիոլոգիորեն իբրև կենդանի, իբրև մարդ նա ապրում է հասարակականորեն: Հասարակակարգի կործանումը մարդկության կործանում չէ: հին Հռոմի հասարակությունը կործանվեց, բայց մարդկությունը ապրեց նոր էտապի կյանքով, ֆեոդալական հասարակությունը կործանվեց, մահացավ, բայց մարդկությունը ապրեց նոր վերելքի հասարակության կյանքով, բուրժուական հասարակության կյանքով, բուրժուական հասարակությունը կործանվում է արդեն և հեռու չէ այն օրը, երբ նա վերջնականապես

¹ Вандриес—Низик, стр. 271.

² Նույն աեղում, էջ 283:

կկործանվի ամբողջ աշխարհում, բայց մարդկությունը դրանով չի կործանվում, այլ ապրում է նոր վերելքի հասարակական կյանքով, ավելի կառարյուլ, ավելի զարգացած՝ կոմունիստական հասարակական կյանքով։ Այսախսի հայտնագործությունը կատարեց մարքսիզմը մարդկային հասարակության պատմության մեջ։ Դասակարգային հասարակության ճիւղաններում տառապող մարդկության համար մարքսիզմը մի պայծառ արեգակ էր, որ բարձրացավ նրա պատմության երկնակամարի վրա՝ նրա ցրտաշունչ կյանքի ու տառապանքի օրերին։ Այդ պայծառ լույսի տակ չքացան ու շարունակում են չքանալ մարդու գիտակցության վրա ճնշող բոլոր մութ ու տերտերական տեսությունները, մարդատեցության մի դաժան շահադործական հարաբերությունները հիմնավորող, մարդկության արժանապատվությունը ստորացնող, մարդկության հատվածները միմյանց դեմ թշնամի դարձնող բոլոր տեսական, փիլիսոփայական, պատմական և այլ սկզբունքները։

Պարզ չէ՞, որ այս պայծառ լույսի տակ պետք է որ մերկանար նաև հնդեվրոպաբանությունը իբրեւ ռասայական ռեակցիոն տեսություն, իբրեւ պատմության դարդացման ընթացքը հտկապիտական եղանակով պատկերող տեսություն, պատմության զարգացման ընթացքը գլխի վրա դնող սկզբունքներ մշակող տեսություն։

Մինչ մարքսիզմը փիլիսոփայական բոլոր ուղղությունները փորձում էին մեկնել, բացատրել հասարակական և բիոլոգիական կյանքի հրեղությունները, հիմնավորել գոյություն ունեցող հարաբերությունները։ Մարքսիզմը նրանով է նաև հայտնագործություն, որ նա ոչ միայն բացատրում է, այլև ցույց է տալիս փոփոխելու ճանապարհը։

Մարքսիզմը պրոլետարական ռեվոլուցիայի պրակտիկայում կատարելագործվեց և իբրեւ տեսություն, և իբրեւ աշխարհը փոխելու ստրատեգիա և բարձրացավ նոր աստիճանի՝ լենինիզմի աստիճանի վրա՝ Մեծ Լենինի և Մեծ Ստալինի հանճարով։ Մարքսիզմը դարձավ կոմունիզմը կառուցելու տեսություն և ստրատեգիա։ Մարքսիզմի 20-րդ դարի պրակտիկան Սովետական Մեծ Միությունն է, մարքսիզմի 20-րդ դարի աստիճանը լենինիզմն է։

Ի հակադրություն հնդեվրոպաբանության՝ սովետական լեզվաբանության հիմքում, ինչպես սովետական բոլոր գիտությունների հիմքում ընկած է մարքսիզմ-լենինիզմը։ Սովետական լեզվաբանությունը չէ ու չի կարող լինել հնդեվրոպաբանության անընդմիջվող շարունակությունը, այլ նա բուրժուական լեզվաբանության՝ հնդեվրոպաբանության, անտիպոզն է, նրա հակադրությունը, նրա տեսական հիմունքների բացասումը։

Իբր այսպես է գրվում հարցը, ոմանք ցուցաբերում են մտավախություն, թե չլինի՞ մենք ուզում ենք թխտել հնդեվրոպաբանության նվաճումները։ Այո, թխտում ենք, բայց միայն հնդեվրոպաբանության տեսական նվաճումները։

Մարքսիզմին նախորդող շրջանում գիտության պատմությունը շատ խնդիրներ ու հարցեր է շոշափել, շատ «նվաճումներ» է ունեցել, սակայն դրանց մեջ մենք պետք է տեսնենք երկու կողմ։ Մի կողմը, որ մարդկության պրակտիկան է ավել, միլիոնների և միլիարդների աշխատանքային և մտավոր գործունեությունը, դա կազմում է մարդկության ամեն մի ապ-

րող սերնդի սեփականությունը, և երկրորդը՝ իդեալիստական փիլիսոփայության նվաճումները կազմող նրա ելակետային դրույթները, նրա աշխարհըմբռնման մեթոդը՝ ահա այդ է, որ մարքսիզմը միանգամայն ժխտում է: Այդպես է և սովետական լեզվաբանությունը հնդեվրոպաբանության հանդեպ:

Սովետական լեզվաբանությունը ունի և կարող է ունենալ միայն ու միմիայն փիլիսոփայական մեկ ելակետ, աշխարհըմբռնման մեկ մեթոդ, փիլիսոփայության մեկ ուսմունք. դա մարքսիզմ-լենինիզմն է:

Մարքսիզմը լեզվաբանության մեջ առաջին կիրառողը եղել է սովետական հանճարեղ լեզվաբան ակադեմիկոս Մառը, որը, վերանայելով բուրժուական լեզվաբանության տեսական հիմունքները, եկավ այն համոզման, որ այդ գիտությունը՝ հնդեվրոպաբանությունը, ռասայական տեսության դիտություն է, հակամարքսիստական, ուրեմն և հակապատմական գիտություն, և նրա տեսական հիմունքները բխում են իդեալիստական փիլիսոփայական հիմունքներից: Ահա ինչու Մառը վճռականորեն արտահայտեց իր ժխտողական կարծիքը հնդեվրոպաբանության մասին: Ուրեմն նպարդ է, որ որևէ ձևով ընդունելի չէ հնդեվրոպաբանության տեսական սկզբունքների օգտագործումը լեզվաբանական հետազոտությունների համար և պետք է կառուցել լեզվաբանության գիտական հիմունքները, այսինքն՝ մարքսիստական հիմունքները: Եվ ն. Մառը վճռական շրջադարձ կատարելով՝ մշակեց այդ հիմունքները ըստ յուր կարյաց, որոնք և դարձան սովետական լեզվաբանության նվաճումները: Ն. Մառի մշակած լեզվաբանական այդ հիմունքների ամբողջությունը կոչվեց «Լեզվի նոր ուսմունք», որ հաճախ նաև կրում էր «Հաքթաբանություն» անունը:

Ի հակադրություն հնդեվրոպաբանության Մառն ընդունեց լեզվի և մտածողության միասնության մարքսիստական թեզը և խոր հետազոտություններով հիմնավորեց այդ թեզը:

Այդ պատճառով էլ Մառը մշակեց ամենից առաջ լեզվի առաջացման հարցը՝ անփախելիորեն կապելով մտածողության առաջացման հետ: Այստեղ Մառը կատարեց մի խոշոր գյուտ, որ մեծ նշանակություն է ստանում լեզվաբանական ուսումնասիրությունների համար, առանձնապես լեզվի պատմությունը ուսումնասիրելու համար: Մառն իր հետազոտություններից եզրակացնում է, որ մարդկային մտածողության որակը տարրեր է եղել հասարակությունների պատմության տարրեր ժամանակաշրջաններում: Նախնական կոմունիստական հասարակական գոյավիճակում մարդկային մտածողության որակը եղել է պրիմիտիվ՝ նախատրամաբանական, իր առանձին տիպի ու տեսակի օրինաչափություններով, արդի տրամաբանական օրինաչափություններից որակապես տարրեր: Մտածողության այդ պրիմիտիվ շրջանի օրինաչափությունները ուրոշվել են մարդկային հասարակության կեցության նախնական բնույթով, որի որոշողն էլ եղել է արտադրողական ուժերի զարգացման պրիմիտիվ աստիճանը: Մարքսիստական այդ դրույթը հանգեցնում է Մառին այն եզրակացության, որ մարդկային մտածողության զարգացման պատմությունը տեղի է ունեցել ստադիաներով, այսինքն՝ որակական թռիչքներով: Ահա մտածողության այդ տարրեր ստադիաները և որոշել են լեզուների տարրեր տիպերը, հետևաբար լեզուների զարգացման պատմությունը նույնպես պետք է վերցնել ստադիա

ըմբռնմամբ, այսինքն թե՛ լեզուների զարգացումը տեղի է ունեցել ստա-
դիալ փոփոխություններով, որակական հաջորդական էտապներով, պայմա-
նավորվելով մատածողության զարգացման ստադիաներով: Ըստ մի շատ մեծ
հայտնագործություն էր և մարքսիզմի համարձակ կիրառումը լեզվաբանա-
կան ուսումնասիրության մեջ:

Մյուս կողմից մարքսիզմի այն դրույթը, որ հասարակական կյանքի
տնտեսական բազան որոշում է նրա իդեոլոգիական ողջ հարստությունը,
որի մեջ արտացոլվում է նա, թելադրում է մարքսիստին լեզուն ուսում-
նասիրելիս դիտել այն որպես մարդկային հասարակական կյանքի պրո-
գնոզիա, ավելի ճիշտ՝ որպես հասարակական իրական գիտակցություն,
պրակտիկ գիտակցություն, իսկ այդ սկզբունքը մղում է լեզվաբանին ա-
մենից առաջ որոնելու լեզվի մեջ կատարվող որակական փոփոխություն-
ները և պայմանավորելու այդ փոփոխությունները գիտակցության մեջ
կատարվող որակական փոփոխությամբ. այս դեպքում լեզվի մեջ կատար-
վող կամ դիտվող մասնակի փոփոխությունները կամ երևույթները հիմ-
նավորել որակական օրինաչափություններով իբրեւ հասարակական գիտակ-
ցության օրինաչափությունների դրսևորումներ: Այդ ամենը հանգում է վեր-
ջին հաշվով լեզվի զարգացման ստադիալականությունը որոշելու պրոբլեմին:

Այսպիսով լեզվաբանությունը դառնում է փիլիսոփայական գիտու-
թյուն և պերսպեկտիվ ունեցող գիտություն՝ դուրս գալով բուրժուական
գիտության կողմից դրված սահմանափակումներից:

Լեզվական երևույթները, ինչպես և ինքն ամբողջ լեզուն, դիտվում
են հասարակական տեսանկյունով իբրեւ մարդկային հասարակական կյան-
քի և զարգացման պրոգնոզիա:

Իսկ ժխտում է այն բիոլոգիական տեսակետը, որ մշակել է բուրժուա-
կան լեզվաբանությունը լեզվի խնդիրները քննելիս: Այդ դեպքում լեզվի
ծագման հարցը, առանձին լեզուների առաջացման հարցը, ժողովուրդների
առաջացման հարցը, լեզուների փոփոխման հարցը, մի խոսքով՝ լեզվի և
լեզվաբանության բոլոր սկզբունքային հարցերը նոր լուսաբանություն են
ստանում՝ բուրժուական տեսակետները՝ ժխտող լուսաբանություն:

Դրա հետևանքով, «Լեզվի նոր ուսմունքը» առաջադրում է լեզվաբա-
նական հարցերի հետևյալ մեկնությունը.

1. Լեզուն առաջացել է գիտակցությամբ եետ միասին, օրպես եետևանք
մարդկային աշխատանքի և լայն աշխատանքի պրոցեսում: Լեզվի նախնական
վիճակը միանգամայն համապատասխան է եղել մարդկային մատածողության
պրիմիտիվ վիճակին, որ որակապես միանգամայն տարբեր է մարդկային
մատածողության արդի ստադիայից: Լեզվի սկզբնական ստադիան սկսվել է
ավելի կոնկրետ լեզվից՝ շարժումային և գծային լեզվից: Հնչյունական
լեզվին անցնելը եղել է մատածողության զարգացման ստադիալ փոփո-
խության հետևանքով: Յուրաքանչյուր հետագա ժամանակաշրջանի լեզու
հանդիսացել է նախորդի տրանսֆորմացիան մատածողության ստադիալ վե-
րափոխության հետևանքով, և դրան համապատասխան: Լեզվի պատմու-
թյունը, հետևաբար, նշանակում է լեզվի ստադիալ զարգացում, որ համա-
պատասխան է մատածողության ստադիալ զարգացման պատմությանը:

2. Մարդկության կյանքը սկսվել է բազմալեզվությամբ, օր եամապա-
տասխան 1. մարդկության սկզբնավորման բազմաեասարակության վիճակին:

Մարդկային հասարակությունը առաջացել է իբրև բազմահազար մանր միավորումներ, հորդաններ կամ տոտեմներ, որոնցից յուրաքանչյուրն իր մարդ դառնալու պրոցեսում հնարել է իր սեփական լեզուն։ Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով առաջացած այդ մանր միավորումների հետագա խաչավորումները գոյացրել են ավելի խոշոր միավորումներ տոհմական կամ ցեղային միավորումներ։ Այդ հասարակությունները միավորվել են և խոշորացել են տնտեսական գործունեության պրոցեսում, երբ զարգացել են արտադրողական ուժերը ու ստացել են նոր որակ։ Երա հետևանքով էլ մանր լեզուների միավորումները ավել են ավելի խոշոր՝ տոհմական և ցեղային լեզուներ, իբրև պատմականորեն առաջացած ընդհանրություններ։

Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով առաջացել է հասարակական հարաբերությունների նոր որակ, դասակարգային հարաբերությունների որակ։ Ճոհմական հարաբերությունների քայքայման հիման վրա առաջացել է աշխատանքի հասարակական բաժանում (1-ին և 2-րդ) և դրա հիման վրա կազմավորվել են դասակարգային հասարակությունները տոհմական և ցեղական միավորների՝ հասարակությունների, միավորումներից։ Այդ միավորումների հարցը վերջին հաշիվով լուծել է հասարակությունների տնտեսական գործունեության միասնությունը կամ այդ միասնությունը առաջացնելու անհրաժեշտությունը։ Ինչպե՞ս հիման վրա տոհմական և ցեղական լեզուների մեջ պատմականորեն առաջացած լեզվական ընդհանրությունները հանգել են նոր տիպի մեծ լեզուների գոյացմանը, որոնք ծավալորվել են դասակարգային լեզուներով։ Լեզուների այդ միացման, ընդհանրացման հետևանքով առաջացած նոր լեզուն կրել է ստադիալ փոփոխություն և այդ ստադիալ փոփոխությունը որակապես փոփոխել է լեզուները։

3. Բայց մեծ լեզուները չոր ուրակի երևույթներ են պատմական մի որոշ շրջանում՝ գոյացած իբրև արդյունք՝ պատմականորեն առաջացող լեզվական ընդհանրությունների այն ժողովուրդների հետ միասին, որոնց լեզուն են նրանք։ Այսպիսով ժողովուրդները դոյացել են իբրև հետևանք այլատարր ցեղերի ու տեղիների մեջ պատմականորեն առաջացող ընդհանրությունների։ Այդ ընդհանրություններից մեկն է նաև լեզուն, ըստ որում այդ լեզուն կազմավորվում է իբրև բարբառների ամբողջություն հենց նրանց՝ այդ բարբառների մեջ առաջացած լեզվական իրականությունների ընդհանրության ճանապարհով, և որ յուրաքանչյուր բարբառը՝ դա որակական տրանսֆորմացիայի ենթարկված նախկին անջատ տոհմական լեզուն է։

Ինչպես տեսնում ենք, այդ սկզբունքների մեջ ռասայականության որևէ հետք չկա, այդ սկզբունքներն ասում են, որ ոչ ժողովրդի և ոչ էլ որևէ լեզվի առաջացում կապված չէ որևէ ռասայի կամ ցեղախմբի հետ, այլ որ մարդկային հասարակությունները առաջացել են պատմականորեն գոյացած մի շարք հատկանիշների ընդհանրությունից և որ լեզուն այդ հատկանիշներից մեկն է, գուցե ամենակարևորը։ Մարդն է ստեղծում իր հասարակությունը և իր լեզուն, նա ստեղծում է ոչ թե ցեղական ինչ-ինչ բնածին հատկություններով, այլ արտադրական աշխատանքով, տնտեսությունը կազմակերպելու այս կամ այն եղանակով և բնավ երբեք՝ իր ցեղական բնածին տվյալներով։

Պատմության զարգացման ըմբռնման այս տեսությունը միանգամայն

ճիշտ է և դա բացատրում է, թե ինչու սկզբնապես ժանր և բազմաթիվ հասարակութունները հետազայում վերածվում են խոշոր, բայց փոքրաթիվ հասարակութունների: Այդ տեսութիւնը կանխատեսում է նաև այն, որ տնտեսութիւնը համաշխարհային մասշտաբով կազմակերպելու, կոմունիստական համաշխարհային արտադրութիւն կազմակերպելու հիման վրա մարդկութիւնը հանգիլու է համաշխարհային հասարակութեան՝ մի համաշխարհային տնտեսութեամբ և մի արտադրակերպով, ուրեմն նաև մի համաշխարհային ընդհանուր լեզվով: Այդ առթիվ ընկեր Ստալինն ասում է.

«Ինչ վերաբերում է ազգային կուլտուրաների և ազգային լեզուների ավելի հեռավոր պերսպեկտիվին, ապա ես եզել եմ ու շարունակում եմ Քալ լենինյան այն հայացքին, թե սոցիալիզմի՝ համաշխարհային մասշտաբով հաղթելու ժամանակաշրջանում, երբ սոցիալիզմը կամրանա ու կենցաղի մեջ կմտնի, ազգային լեզուներն անխուսափելիորեն պետք է ձուլվեն մի ընդհանուր լեզվի մեջ, որը, հնարկե, չի լինի ոչ վելիկոռուսական, ոչ գերմանական, այլ մի ինչ-որ նոր բան».¹

Ոչինչ չկա ավելացնելու, ամեն ինչ ասված է լենինյան կանխատեսութեամբ:

Սրանք են այն լիզվաբանական սկզբունքները, որոնք ընկած են սովետական հայագիտութեան հիմքում:

Սովետական հայագիտութիւնը առաջացավ և կազմավորվեց անհաշտ պայքարի մեջ ընդդեմ հին հայագիտութեան: Այդ պայքարը սկզբունքային պայքար էր, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներից ելնող մի պայքար: Շատերը ցանկացել են պատկերացնել, իբրև թե սովետական հայագիտութիւնը որևէ կերպ թերահնահատում է հին հայագիտութեան ծառայութիւնները: Այդ ճիշտ չէ և ոչ միայն ճիշտ չէ, այլև բացարձակ զրպար-տութիւն է:

Սովետական հայագիտութիւնը միանդամայն պարզ գիտակցում է, թե ինչ տիտանական աշխատանք է կատարված հատկապես հին հայ հայագետների՝ Հ. Աճառյանի, Հ. Մանանդյանի, Մ. Արեգյանի, Լեոյի, Մալխասյանի, այլև դիտնական Մխիթարյանների կողմից փաստական նյութերի բազմահազար տվյալներ՝ լեզվական, պատմական, գրական ու դրականագիտական, տասնյակ և հարյուրավոր հատորներով հավաքելու, աժբարելու, գասգասելու և պահպանելու մեջ: Եռանդ, նվիրվածութիւն իրենց ժողովրդի կուլտուրային, սեր դեպի աշխատանքը, քրտնաջան գործունեութիւն, որևէ վարձատրութիւն չսպասող տքնութիւն,—ահա այն հատկութիւնները, որ ունեցել են հայագգի հին հայագետները և կուտակել սովետական սերնդի համար իրենց ազնիվ աշխատանքի պտուղները: Ի վ կարող է ժրխաել, ո՞վ կարող է մերժել այդ ամենը:

Սակայն այդ ամենը կատարված է մտքի և ոգու ստորագասութիւն ցուցաբերելով դեպի եվրոպական բուրժուական գիտնականները: Լինելով կապիտալիստական հարաբերութիւններում ապրող ու գործող գիտնական, նրանք տեսել ու զգացել են հայ ժողովրդի ստորացման վիճակը: Ցարական ժիպետութեան և դաժան սուլթանիզմի քմահաճույքին հանձնված հայ ժողովուրդը խոշտանգման է ենթարկվել, հաճախ նույնիսկ հայրենի բռնա-

կալների ձեռքով, կամ նրանց վարած ստորաքարշ քաղաքականության հետևանքով, Արհամարհանքի ու հալածանքի մեջ ապրող հայ ժողովրդի վիճակին զիտակ մեր գիտնականները ցնծությամբ արձայանքում էին եվրոպացիների ամեն մի շնչին ուշադրության, նրանց ուրախացնում էր, երբ մի անվանի քաղաքագետ ու գիտնական կամ թեկուզ երկրորդ կարգի գիտնական լավ խոսքով էր հիշում հալածանքի ու ջարդի ենթարկվող հայ ժողովրդին: Իսկ նրանք, որոնք զբաղվում էին հայ ժողովրդի պատմության, լեզվի և կուլտուրայի պրոբլեմներով, արժանանում էին երախտագիտության մեծ զգացմունքի, երախտապարտության մեծ արտահայտության հայ բուրժուական ինտելիգենցիայի կողմից:

Հայ բուրժուազիան այդ տրամադրություններն օգտագործում էր հայ ժողովրդի բախտը եվրոպական իմպերիալիզմի կոռքի անիվին կապելու հաժաբ, հասկանալի կղաոնա, թե ինչու այդ ստորաքարշության մըթնոլորտը խտացվում էր հայ բուրժուական նացիոնալիստների կողմից և օգտագործվում հայ ժողովրդի քաղաքական ուղին ապատգրության իսկական ճանապարհից. այսինքն՝ հայ ժողովրդի բախտը ողուսական ազատագրական շարժման հետ կապելու ուղուց շեղելու համար: Այս բանն էր, որ հաշվի չեն առել հայ հին հայագետները:

Մեր՝ Սովետական հայագիտությունը առաջ եկավ և դարգացավ սովետական կարգերում, լենինյան-ստալինյան ազգային պայծառ քաղաքականության կիրառման պայմաններում: Լենգունիով սովետական կարգերը, հայ ժողովուրդը ազատագրվեց դարավոր ստրկացման վիճակից, ստացավ իր ամենարժք տիպի պետականությունը՝ սովետական պետականությունը, հղորացավ տնտեսապես, ձեռք բերեց երջանիկ ապրելու նախապայմաններ: Սովետական Մեծ Միության ժողովուրդների և առաջին հերթին ողուսական եղբայրական մեծ և հումանիստ ժողովրդի աջակցությամբ կազմակերպվեց նրա սոցիալիստական տնտեսությունը և սոցիալիստական արդյունաբերությունը, որոնց հիման վրա աճեցին, դարգացան ու նոր թափ ստացան նրա նոր, սովետական կուլտուրան, գիտությունը, արվեստը և լեզուն: Հայ ժողովրդի ¹/2-ը մտավ դպրոցները սովորելու, միջնակարգ կրթությունը դարձավ հանրամատչելի և մասսայական կրթություն, բարձրագույն կրթությունը դարձավ մատչելի բոլոր ընդունակ և գիտության ծառավ հայ երիտասարդների համար: Ճասնյակ անգամ բազմացավ նրա ինտելիգենցիան՝ լցված սեփական հայրենիքի, սեփական սովետական պետության նկատմամբ սիրով և երախտագիտությամբ: Այդպիսի մի միջավայրում չէր կարող առաջանալ կամ հող ունենալ ստորաքարշություն բուրժուական գիտության և կուլտուրայի հանդեպ:

Սեփական ժողովրդի անկախ պետականությունը, անկախ տնտեսական և քաղաքական կյանքը, սովետական երկու հարյուր միլիոնանոց ժողովրդի հզոր պաշտպանությունը լցնում են սովետական հայադեմոստրիկ հպարտության ղղացումով, ուստի և նրանց դասողությունն ու մտածողությունը անկախ է բուրժուական իդեոլոգիայի ճնշումից. ահա ինչու նրանց հասուն էլ ստորաքարշությունը:

Առաջնորդող սկզբունք ունենալով մարքսիզմ-լենինիզմը, ունենալով լեզվաբանական այնպիսի հենարան, ինչպիսին է սովետական հանճարեղ

գիտնական Ն. Մանուկյանի «Հեղինակի նոր ուսմունքը»։ Սովետական հայագիտությանը մշակում է իր տեսական հիմունքները՝ անհաշտ պայքար մղելով նրան հայագիտության բոլոր արտադրանքների ու թերությունների։ այդ թվում նաև ստորաքարշության գեմ. նրան հայագիտության տեսական սկզբունքների գեմ. Բանի որ նրան հայագիտության տեսական սկզբունքները հանում էին եվրոպական բուրժուական իդեալիստական գրությունները սովետական հայագիտությանը մերկացնում է այդ գրությունները իրեն սխալ սկզբունքային ելակետներ, չգիշխելով նրան հայագիտության անձնական շարժել կերպ. Դրա հետ միասին սովետական հայագիտությանը մշակում է հայագիտության նոր, մարքսիստական հիմունքները։

Պայքարը հանուն սովետական հայագիտության. հանուն մարքսիստական հայագիտության սկզբունքների մշակման Հայաստանում սկսվեց 30-ական թվականների սկզբներին։ Ըստ սրում մարքսիստական հայագիտության համար գիտական արժեք ունեին ոչ միայն նրան վերաբերող խնդիրները, այլև այսօրվա՝ այժմեական խնդիրները (քերականության, ուղղագրության և այլ խնդիրներ)։ Փորձենք ներթուփ շոշափել այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են սովետական լեզվաբանական հայագիտության հիմունքներին։

1. Հին հայագիտության համար գոյություն ուներ գիտական մեկ պրոբլեմ, որ հանդիսանում էր նրա հիմնական պրոբլեմը. դա հայ ժողովրդի և հայերեն լեզվի ծագման պրոբլեմն էր, որը լուծելու համար օգտագործվում էին շատ գիտություններ՝ հնագիտություն, լեզվաբանական ստուգաբանություն, նրան աշխարհի պատմության ուսումնասիրություն, պալեոգրաֆիկություն, բնագրություն, պատմության նրան աղբյուրների ուսումնասիրություն, տեղանունների ստուգաբանությունները, նրան ֆուլիորի ուսումնասիրություն և այլն, և այլն։ Այդ բոլոր գիտությունների ուսումնասիրությունները տարվում էին մի ուղղությամբ՝ ոչ թե սրեկափված վայրերում ուսումնասիրել և այդ վայրերից եզրակացություններ հանելով լուծել հիմնական պրոբլեմը՝ հայ ժողովրդի առաջացման պրոբլեմը, այլ, նախորդ ընդունելով եվրոպական գիտնականների արտահայտած համոզմունքը՝ հայ ժողովրդի և հայերենի առաջացման մասին, նյութեր ու փաստեր հավաքել այդ բանը հաստատելու համար։ Այդ ուղղությամբ երբեմն չնչին գիտությունները համարել են մեծագույն նվաճում և կարևոր փաստ խոշոր եզրակացություններ հանելու համար։ Այսպես, օրինակ, Սարգսյանը վկայում է թե՛ «Ինչպես որ, սովետ. Արմենոսը թեոսալական Արմենիոն բազմաթից էր, որը գտնվում է Փերեյի և Հարիոսյի միջև Բոյրեյիս լճի մոտ, և նա Յասոնի հետ արշավել է Արմենիա։ Գերոնիոս փառապանին և Մեդիոս Հարիոսյանն ու նրանց հետ եղբայրները, որ մասնակցում էին Աղեքսանդրի արշավանքին՝ ստում են, որ երկիրը կոչվել էր Արմենիա Արմենոսի անունով»¹։

Ինչպես տեսնում ենք, դա հունական մի ավանդություն է, որի անստույգ լինելը լույսի պես պարզ է։ Բայց դրանից հնդեվրոպականները եզրակացնում են, որ հայերը եկել են արեմուտքից, եվրոպայից։ Այսպես

¹ Հ. Սարգսյան — Գիտնական տեղանունները հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945 թ., էջ 14-15.

են և մյուս բոլոր վկայությունները՝ Այդ մանր-մունր փաստերին իրենք հնդեվրոպարան լուրջ դիտնականները չեն հավատում, բայց որովհետև դա անհրաժեշտ է հայերի առաջացման միգրացիոն տեսությունը հաստատելու համար, ուստի այդ վկայություններն ուղցնելով մի առանձին կարևորություն են տալիս դրանց։

Այդպիսի մանր կռվանները ծառայեցնելով հիմք՝ միգրացիոն տեսության չատագոյնի շրջանում են հիմնավորել եվրոպական բուրժուական գիտնականների տեսակետները հայ ժողովրդի ծագման մասին։ Նրանք աչքաթող են անում կամ բոլորովին հաշվի չեն առնում այն, որ հայ ժողովրդի կենցաղակերպը, արտադրակերպը, լեզուները ու հասկացությունները, նույնիսկ ֆիզիկական կառուցվածքը անմիջապես չեն կապվում եվրոպայի՝ անցյալում ապրած ժողովուրդների հետ, կամ եթե կապվում են, ապա այն չափով, ինչ չափով դա կարող է կապվել սեմական ժողովուրդների կամ ավելի ևս հարևան վրացի, ադրբեջանական և այլ ժողովուրդների հետ։ Բազմահազար են այն փաստերը, որոնք մեր ժողովրդի կուլտուրան, կենցաղը, սովորույթը, դրամուսները, արտադրակերպը, անունները, տեղանունները կապում են այն բնակիչների հետ, որոնք ապրել են Հայաստանում հայ ժողովրդի պատմության սկզբնավորումից շատ առաջ։ Աչքաթող են անում այն, որ մեր ժողովուրդը ապրում է ուրարտացու ունեցած բնակարանի մեջ, որ մեր ժողովրդի կահկարասին ու ամանեղենը Ուրարտուի տերիտորիայի բնակիչների կահկարասիների ու ամանեղենի զարգացման տեսակն է, կամ նույնիսկ նույն տեսակը (պուտուկ, շերեփ, գդալ, խաչերկաթ, կարաս, խնոցի և այլն), որ մեր ժողովրդի արդուզարդը, զարդարանքներն ուղղակի շարունակությունն են կազմում Անդրկովկասի և Հայաստանի նախկին բնակիչների այդ կուլտուրայի, որ մեր ժողովրդի յուրաքանչյուր հաավածը կրում է այն ցեղական անունը, որ մի ժամանակ Ուրարտուի երկրի ցեղերն էին կրում, որ մեր ամբողջ աշխարհագրական անունները տեղական են, իսկ լեզվի մատերիալի մեծ մասը տեղական, որ մեր լեզվի ամբողջ կառուցվածքը սեփական է, իրեն՝ հայ ժողովրդինը, նրա ստեղծագործածը, նրա մտածողական սիստեմի լեզվական ձևավորումը և այլն, և այլն։ Հենվելով մեկ բառի, գուցե և սխալ արտաբերված կամ արտասանած բառի, օրինակ «Արիմի» և «Արմեն» բառերի նմանության վրա, կատարում են այնպիսի եղրակացություններ, որ սովետական հետադոտորի մեջ առաջացնում են զարմանք ու հիասթափություն։

Պարզ է՝ այդ բոլորը արվում է նրա համար, որպեսզի անպայման հաստատվի, թե հայերը հնդեվրոպացիներ են։

Միգրացիոն տեսության հիմնավորման համար ամենաշատ փաստերը կգտնենք ակադեմիկոս Մանանդյանի աշխատության մեջ, որտեղ բերված են եվրոպացի և հայ գիտնականների կուտակած բոլոր ենթադրությունները, Նրր քննում ենք այդ աշխատության մեջ բերած տվյալները, նկատում ենք, որ լուրջ, հավատարու փաստեր չկան, երևի շատ չհավատարովեղած փաստերին, որոնք կարող էին հիմնավորել միգրացիոն տեսությունը, ակադեմիկոս Մանանդյանն ասում է. «19-րդ դարում կատարված գիտական խոշոր ուսումնասիրությունների ու մեծ գյուտերի շնորհիվ արդեն անվիճելի կերպով (ընդգծումն իմն է) Ա. Ղ.) պարզաբանված է, որ այժմյան հայերի նախահայրերը հնդեվրոպական արմեններն են, որոնք Փոքր Ասիայից գաղթել

են Հայաստան, հավանորեն 7-րդ դարում կամ 6-րդ դարի սկզբներում մեր թվականությունից առաջ¹ ինչպես ասենում ենք՝ այստեղ ակադեմիկոսը հնդեվրոպական բուրժուական դիանականների կարծիքը բերում է իբրև անվիճելի գիտական ճշմարտություն և ապա իր աշխատության բազմաթիվ էջերում ջանք գործ գնում այդ «անվիճելի» տեսությունը հաստատող մանր-մունր փաստեր դիզել:

Մեկ առ միշտ, պետք է հայտարարենք բաց ճակատով, որ սովետական հայագիտությունը բացարձակապես մերժում է բուրժուական պատմագիտության կոնցեպցիայի գիտականությունը: Այդ բուրժուական պատմագիտության կոնցեպցիան, ինչպես Մառն է ասում, չակերտավոր գիտական հիմունքների վրա դրված տերտերականությունն է, աստվածաբանությունը:

Սովետական հայագիտության համար իբրև պատմագիտական կոնցեպցիայի հիմունք ծառայում են մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների կոնցեպցիան և, ամենից առաջ, ընկեր Ստալինի հանճարեղ ու պարզ դրույթը հնդեվրոպական համարված աղգերի մասին:

«Ազգը — դա, ամենից առաջ, ընդհանրություն է, մարդկանց որոշ ընդհանրություն: Այդ ընդհանրությունը ոչ ռասայական է և ոչ ցեղական: Այժմյան իտալական ազգը կազմավորվել է հռոմայեցիներից, վերմանացիներից, էտրուսկներից, հույներից, արաբներից և այլն: Երանսիական ազգը կազմավորվել է գալլերից, հռոմայեցիներից, բրիտներից, գերմանացիներից և այլն: Նույնը պետք է ասել անգլիացիների, նեմեցների և այլոց մասին»²:

Այս ելակետով առաջնորդվելով՝ սովետական հայագիտությունը դեռ 1932 թվին հիմնավորեց հետևյալ թեզը. «Արմենները ոչ մի տեղից չեն եկել, նրանք Եփրատի ափերի հնադարյան բնակիչներն են, իրենց անունը տվել են Փոքր Հայքին, հետագայում այդ անունը հույների ու պարսիկների բերանով տարածվել է ամբողջ Հայաստանի վրա»³:

Ինչպես գիտենք՝ հետագայի ուսումնասիրությունները միանգամայն հաստատեցին այդ թեզը⁴:

Եվ քանի որ արմենների հարցն այդպես է, ապա հայ ժողովրդի ծագման հարցը բոլորովին այլ կերպ է լուսաբանվում: Բազմաթիվ փաստեր սովետական հայագիտությանը դեռ 15 տարի առաջ բերին այն եզրակացության, որ «հայերը և ոչ մի տեղից չեն եկել և ոչ մի հզոր ռասայի ճյուղ չեն կազմում, այլ տեղական տոհմական կեցության մեջ ապրող հասարակությունների փոխադարձ ներձուլման, սոցիալ-քաղաքական և տնտեսական ներթափանցման ու արտադրական ուժերի զարգացման հետևանքով առաջ

¹ 2. Մոնանյան — Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հասար Ա. Երևան, 1945 թ., էջ 7:

² И. Сталин — Сочинения, т. 2, стр. 292—93.

³ Ա. Ղափրյան — Ներածություն հայոց լեզվի պատմության, Երևան, 1932 թ., էջ 59:

⁴ Կ. Пиотровский — История и культура Урарту, Ереван, 1944 г.

⁵ Գ. Ղափանցյան — Հայերի և հայերենի զոյացման մասին, Սովետական գրականություն և արվեստ, 1941 թ.:

եկած նոր էթնիկական գոյացում են՝ նախնական ֆեոդալական հասարակության գոյացման հիման վրա»¹

Ինչպես գիտենք, այդ ևս հիմնավորվեց հետագայի մի շարք նոր ուսումնասիրություններով² Սովետական հայագիտությունը գտնում է, որ ժողովուրդը կազմավորվում է իրրի դասակարգային հասարակություն, որ առաջանում է տոհմական հասարակությունների քայքայման հետևանքով։ Տոհմական հասարակական հարաբերությունները քայքայվում են նրանց արտադրողական ուժերի վարկացումը նոր աստիճանի վրա բարձրանալու հետևանքով, նախնական կոմունիստական արտադրությունը անհատականով փոխարինվելու հետևանքով, աշխատանքի հասարակական առաջին և երկրորդ բաժանման հետևանքով։ Արտադրական նոր եղանակի առաջացումը, տնտեսության կազմակերպման նոր տիպը միացնում է տոհմական կարգերում իրարամերժ խմբերի, Արտագրողները նոր՝ դասակարգային հարաբերությունների մեջ են թևակոխում, հասարակության արտադրական ուժերը նոր դասավորություն են ստանում, և ահա այդ հիման վրա կազմակերպվում է հասարակական նոր միավոր, որ ձևավորվում է իրրե նորանուն ժողովուրդ։ Այդ ժողովրդի նախորդները կամ այն տոհմերն ու ցեղերը, որոնք կազմում են այդ ժողովուրդը, որքան են եկվոր և որքան տեղացի, դա չէ, որ լուծում է ժողովրդի գոյացման հարցը։ Հակառակ տեսակետի է Մեյիսեն, որն այսպես է պատկերացնում հնդեվրոպական ռասայի ներկայացուցիչների կողմից հին պետությունների և կուլտուրաների կազմակերպումը։ Եկնելով ձեռներեց մարդիկ՝ այս հաղթողները (հնդեվրոպական ռասայի ներկայացուցիչները) Ա. Է. Լ. ունեին սոցիալական կազմակերպություն մեծ զգացում։ Սրանք այն փոքրաթիվ արխատոկրատիաներն էին, որոնք, սկսած 2-րդ հազարամյակից նախքան քրիստոնեական դարաշրջանը, կազմակերպեցին Հնդկաստանը, Իրանը, Հայաստանը և ողջ Եվրոպան³։

Մեյիսենի հետ որևէ կերպ համաձայնել չի կարելի. ռասայորեն չի կազմակերպվում ոչ ժողովուրդը և ոչ էլ պետությունը։

Այլ տնտեսական նոր՝ դասակարգային, կարգն է որոշում և՛ ժողովրդի կազմավորումը և՛ պետության կազմակերպումը։ Արտադրապես շահագրգռված այլամերժ տարրերը տնտեսությունը կազմակերպելու անհրաժեշտությունից կարող են միանալ և մի հասարակություն կազմել։ Այդ ընթացքում, երբ պետք է լինում, շատ արագ կերպով վերանում են և լեզվի տարբերությունը, և՛ կենցաղի տարբերությունը, և իդեոլոգիայի տարբերությունը, թեև չպիտի աչքաթող անել, որ նախկին համակենցության պրոցեսում այդ բոլոր ուղղություններով առաջացած են լինում բազմաթիվ ընդհանրություններ, որոնք և հիմք են ծառայում նոր ժողովրդի ընդհանուր կողմերի որակի առաջացմանը և ուժեղացմանը։ Սովետական հայագիտությունը գտնում է,

¹ Ա. Ղարիբյան — Ներածություն հայոց լեզվի պատմության, էջ 86։

² Ե. Ղափանցյան — Հայերի և հայերենի գոյացման մասին — «Սովետական գրականություն և արվեստ», 1941 թ.։ Ա. Ղարիբյան — Ներած. հայոց լեզվի պատմության, 1935 թ.։ Բ. Пуотровский — К вопросу о происхождении арм. народа, 1946 г. Ա. Ղարիբյան — Հայ ժողովրդի պատմության սկզբնավորման շրջանը. — Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր. № 9, 1946 թ., հասար. գիտ. սերիա։ Գ. Капанцян — К происхождению армянского языка, 1946 г., Ереван.

³ A. Meillet, Les langues dans l'Europe nouvelle, p. 13, 1928.

որ Հայաստանի տերիտորիայի վրա իբրև հնադարյան բնակիչներ եղել են հարյուրից ավելի ցեղեր և տոհմեր, ինչպիսիք են՝ եկեղիք, Խորձյաճիկ, Կեզ, Հաշտյանք, Ծովի (սեպազր, Սուբարի), Հանձիտ (սեպազրուկ, Ունգիտ), Կորեք, Դեռիք, Աղձնիք (սեպազր, Ալգինի), Խերհետ, Կամ Խարիի և Հաթ, Սառունք (սեպազր, Սառու), Ասպակունիք, Աշուհիք, Երեվակ, Մոկ, Իշ (սեպազրուկ, Իսուա), Կորդիք, Սոթ, Սիունիք (սեպազր, Սիունի), Վայք, Կոտայք, Տայք (սեպազր, Դաիաիք), Աբունիք, Ակունիք, Ամատունիք կամ Մատյանք, Աբայնիք, Արաքունիք կամ Արեւիք, Միլդիս (սեպազր, Միլիտու), Ուրմիատիք (սեպազր, Ուրմիատի), Խնուս (սեպազր, Խունուսա), Պալաեւիք, Կարդուք, Մարդ, Մարք, Մուշք, Կարիք (սեպազր, Կիրիք), Դիադիք (սեպազր, Դիդիք) և այլն, և այլն: Դրանց մեծ հայերեն լեզվական ձևավորումով ուղղակի հիշատակում ենք որպես ցեղեր, բայց միայն տեղեր ենք հասկանում, որովհետև, բոլորին հայ համարելով, չենք կարողանում պատկերացնել, որ դրանք առանձին ինքնուրույն ցեղեր են եղել: Անժխտելի է, որ դրանց հետ միասին հայեր են դարձած հետևյալ ցեղերը՝ Դոգ (Դոգարք), Սիրակ, Դամիրք կամ Դիմրիք (Գյումրի), Սալ (Ջոկ), Տվյալներկան, որ վերջիններս սկյուռական ցեղեր են և Հայաստան են եկել 7-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբներին: Ահա այս բոլոր ցեղերից 7—2 դարերում դասակարգային հասարակական հարաբերությունների հիման վրա կադավորվել է հայ ժողովուրդը:

Այսպես է սովետական հայագիտության այս դրույթը:

2. Ինչպես հայ ժողովրդին, այնպես էլ հայերեն լեզուն հնդեվրոպաբանությունը համարում է եվրոպայից կամ հնդեվրոպացիների հայրենիքից Հայաստան ներմուծված: Այդ առթիվ գրված է. «Լեզվաբանությունը հաստատել է, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայտնի է դիտություն մեջ հնդեվրոպական լեզվաբան անունով և որին պատկանում են Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև եվրոպայի արևմտյան ծայրը (Իսլանդիա) տարածված լեզուները: Այս բոլորը նախապես կազմում է մի լեզու, որ խոսվում էր հնդեվրոպացիների կողմից նախահայրենիքում, հնագույն ժամանակ: Հետևապես՝ տալ հայերենի ամենահին նկարագրությունը, նշանակում է նկարագրել հնդեվրոպական նախաշրջանի լեզուն և հնդեվրոպացիների քաղաքակրթությունը: Այսպես՝ հնդեվրոպացիոց նախահայրենիքի տեղը գեոկա ճիշտ չէ որոշված, նա գտնվում էր եվրոպայի արևելյան մասերից սկսած մինչև Թուրքեստան գտնված տարածության մեջ՝ մի որոշ տեղ (հավանաբար Բալթիկ ծովի արևելյան կողմերը՝ արդի Լիտվայի սահմաններում կամ հարավային Ռուսաստանում): Մի ժամանակ այդ ազգը (sic!) նախահայրենիքում բնակվելուց հետո, տալիս է իրենից զանազան զաղթականություններ, որոնք փոխվում են գրեթե ամբողջ եվրոպայի և Ասիայի մի մասի վրա: . . . հնդեվրոպացիոց զաղթականության սկիզբը պետք է դնել ն. Բ. 3-րդ հազարամյակի կեսին, այն է՝ 2500 թվերին»:²

Այստեղ ասված է ամեն ինչ և ընդունվում է անվերապահորեն եվրո-

¹ Հ. Մանանդյան — Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պոբլիցիստների մասին. Երևան, 1944 թ.

² Հ. Անանյան — Հայոց լեզվի պատմություն, 1 մաս, Երևան, 1940 թ., էջ 7—8:

ազական գիտնականների կողմից առաջագրված այն տեսակետը, որ հայերեն լեզուն ներգաղթած հայ ժողովրդի հետ միասին Հայաստան է բերված հնդեվրոպացիների նախահայրենիքից, այսինքն, ինչպես տեսանք վերևի մեջբերումի մեջ, այժմյան Լիավայից՝

Այդպես էր հին հայագիտության տեսակետը: Մովսեսական հայագիտությունը հիմնովին մերժելով այս տեսությունը, հաստատում է, որ հայերեն լեզուն ոչ մի տեղից չի եկել, այլ նա գոյացել է (Հայաստանում): Հայերեն լեզուն չի ծնվել, այլ նա ստեղծագործություն է նոր հասարակական հարաբերությունների, նա սոցիալական արդյունք է, և ոչ բիոլոգիական ծնունդ. նա պատմականորեն գոյացած ընդհանրություն է:

Մովսեսական հայագիտության այդ համոզմունքը բխում է այն բազմահազար փաստերից, որոնք վկայում են, որ հայերեն լեզուն տեղական գոյացում է: Գաղմավորվող էթնիկայի համար առաջանում են մի շարք հատկանիշներ, որոնք կազմում են այդ էթնիկայի մեջ մտնող ցեղերի ու տոհմերի ընդհանուր հատկանիշները, որոնցով և նրանք գիտակցում են իրենց միևնույն էթնիկայի հատվածներ: Այդ ընդհանուր հատկանիշներից մեկն էլ լեզուն է, որ իբրև ընդհանրություն, առաջանում է երկար ժամանակվա պրոցեսում՝ ցեղատոհմային պատմական հարաբերությունների ընթացքում: Այդ ընդհանուր հատկանիշը, լեզուն, ունենալով բազմահազար իրակություններ, ժառանգում է այդ իրակությունները իրենց նախորդող առնչական անկախ լեզուներից, որոնք դարձել են արդեն տվյալ էթնիկայի լեզվի բարբառները: Եթե այդ էթնիկական լեզվին նախորդող անկախ ցեղատոհմական լեզուների մեջ կան ավելի կամ պակաս քանակությամբ ընդհանուր լեզվական իրակություններ, որ նույնն են հարևանների լեզուների հետ, փոխառնված են նրանցից կամ ներմուծված են ցեղական կամ տոհմերի ու տոհմախմբերի գաղթների պատճառով, ապա դրանք իբրև նոր ժառանգություն անցնում են նոր լեզվին ի սեփականություն, եթե միայն նրանք ընդհանուր են բոլոր ցեղական լեզուների մեջ:

Հետևաբար՝ եթե հայերեն լեզվի մեջ կան լեզվական մի շարք փաստեր, որոնք կապվում են կամ որոնք նման են հնդեվրոպական լեզուների նույն փաստերի հետ, ապա ճիշտ չէ այդ նմանություններից ելնելով դատել, թե հայերեն լեզուն ինչ որ նախամայր լեզվի զավակն է և դրա հետևանքով է, որ նրա մեջ կան նման գծեր իր «եղբայրակից» հնդեվրոպական լեզուների հետ: Ամենից առաջ հայերեն լեզվի մեջ եղած բառական նմանությունները հնդեվրոպական լեզուների հետ կազմում են հայերեն բառապաշարի շնչին տոկոսը, այն է՝ ընդամենը 60%, 11 հազարից միայն 700, իսկ դրա դիմաց՝ 11 հազարից շուրջ 6 հազար որևէ կապ չունի որևէ լեզվի հետ և կապել էլ հնարավոր չէ: Հետևաբար՝ մեր բառապաշարի 50%-ը կամ ավելին ժառանգված է տեղական ցեղատոհմական լեզուներից, ըստ որում այդ բառերի մեջ մտնում են այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ հաց, քաւր, ցորեն, գարի, ձու, ագի, անոթ, ափ, բիր, գանգ, քաթ, թև, թիգ, քուշ, ժանիֆ, իրան, լանջ, ծոց, կաշի, կառափ, կատար, կատիկ, կզուկ, կուլ, կուրծք,

¹ Ա. Արիբյան - Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, հրատ. 1937 թ., էջ 78:

կտուց, մագ, մորթ, հոնք, ներքան, շուրթ, պինչ, պոչ, պորտ. վիգ, քիթ, ծառ, ծով, դրաստ, ձախ, երկար, երկիր, բուխ, բուխտ, բուխտ և այլն:

Նշանակում է, թե մեր լեզուն իր բառապաշարով հիմնականում տեղական է:

Ինչ վերաբերում է մեր լեզվի քերականությանը կամ ամենից առաջ հնչյունաբանությանը, ապա այդ մասին հնդեվրոպական խոշոր հայագետ Մեյլեն վկայում է, թե՝

«L'armenien presente donc un systeme phonetique tout different de celui de l'indoeuropeen».¹

(Հայերեն, ուրեմն, քերականացում է հնդեվրոպականից միանգամայն տարբեր հնչյունական սխեմով):

Հայերեն լեզվի ձևաբանությունը, այսինքն՝ հոլովումն ու խոնարհումը նույնպես հնդեվրոպական չեն: Ինչպես հին հայագիտությունն է պնդում, հայերեն լեզվի քերականությունն անփոփոխ կերպով իր ամբողջությամբ ժառանգված է հնդեվրոպական նախալեզվից և Հայաստան է բերված ու պահպանված անվթար կերպով, անխառն կերպով: Այդ ապացուցելու համար համեմատություն է կատարվում հնդեվրոպական այլ և այլ լեզուների հետ և ցույց են տրվում նմանություններ, որոնք իրր թե վկայում են հայերեն լեզվի քերականության նույնությունը հնդեվրոպական նախամայր լեզվի հետ: Բայց նույն Մեյլեն, հեաադոտելով հայերենի քերականությունը, պնդում է, թե՝

«Dans l'ensemble le systeme phonetique et morphologique de l'armenien est profondement distinct de celui de l'indoeuropeen».

(Ամփոփ ասած՝ հայերենի հնչյունական և ձևաբանական սխեմովը խորապես տարբերվում է հնդեվրոպականից):

Այդ նշանակում է՝ չնայած բոլոր ջանքերին, եվրոպացի հնդեվրոպաբաններին չի հաջողվում ապացուցել իրենց թեզը, և նրանք զինաթափ են լինում փաստերի առաջ:

Տեսնում ենք, որ հին հայագիտության տեսության քերականական կովանները խիստ թույլ են, չնչին և ոչինչ չասող:

Իրապես մեզ համար մի խնդիր կա պարզելու: Ինչպես է առաջացել հայերենի և ընդհանրապես բոլոր լեզուների խոնարհումն ու հոլովումը, ինչպես է առաջանում բառածանցումը: Հնդեվրոպաբանական լեզվաբանությունը այդ հարցերին վճռական պատասխան չի տալիս, իսկ այն լեզվաբանները, որոնք այդ հարցերին պատասխանում են, ստիպված են ընդունելու, որ հոլովման և խոնարհման քերականական երևույթները առաջանում են ամբողջական բառերի կցումով, նույնը և ածանցումները: Ուստի պետք է ընդունել, որ հնդեվրոպական համարված ընդհանուր ածանցները կամ հոլովման ու խոնարհման մասնիկները առաջացել են անկախ բառերից: Իրանք ինչպե՞ս են առաջացել և ինչ ճանապարհով, հնդեվրոպաբանները չեն էլ ցանկանում պարզել, ոտովհետև այդ հարցի քննությունը հանգեցնում է լեզուների զարգացման ստադիալ տեսության, որը

¹ A. Meillet—Esquisse d'un grammaire comparée de l'armenien classique, p. 7.

² Նույն աղում, էջ 111.

միանգամից ժխտում է լեզուների առաջացման ծննդաբանական տեսությունը: Այդ պատճառով հնգեվրոպաբանության ընդհանուր լեզվաբանական ուսումնասիրությունները չեն խորացվում և վերջին հաշվով նվիրվում են ծննդաբանական հարցերին: Մինչդեռ լեզվի մեջ քերականության և շարահյուսության առաջացման պրոբլեմը լեզվաբանության փոստության ամենակարևոր պրոբլեմներից է և դրանից ելնելով է, որ պետք է լուծել ամեն մի լեզվի քերականության և շարահյուսության առաջացման հարցը:

Սովետական լեզվաբանությունը հաստատել է, որ լեզուների զարգացման պրոցեսը կատարվում է ստադիաներով, որ արտացոլումն է ստածոգության զարգացման ստադիաների: Լեզվի ստադիալ զարգացման հետևանքով առաջացել է լեզվի շարահյուսական և ձևաբանական կառուցվածքը: Լեզվի ստադիալ զարգացման տեսությունը ենթադրում է մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունների գոյությունը, որոնցով և բացատրելի են լեզուների ձևաբանության ու շարահյուսության առաջացումն ու զարգացումը: Ակադեմիկոս Մառի ուսմունքի հիմնաքարը կազմող մի սկզբունքը լեզվաստեղծման համաշխարհային պրոցեսի միասնությունը հանդիսանում է այն հիմնավորումը, որ տալիս է նա լեզվի «ստադիալ զարգացմանը»: Մառի այդ միտքն հաստատվում է մարքսիզմի այն հորը դրույթով, ըստ որի «թեև ամենազարգացած լեզուներն ունեն օրենքներ ու սահմանումներ, որոնք ընդհանուր են ավելի նվազ զարգացած լեզուների հետ, բայց հենց նրանց տարրերությունն այդ համընդհանրականից և ընդհանուրից այն է, որ կազմում է նրանց զարգացումը»¹:

Սովետական լեզվաբանության համար էլ Մարքսի նշած այդ ընդհանուր օրենքները գտնված են և որոշված լեզուների ստադիալ զարգացման տեսության մեջ: Այդ օրենքները հետևյալն են.

1. Ամեն մի լեզվի շարահյուսությունը զարգացել է պրիմիտիվ վիճակից դեպի բարդ վիճակ՝ կապված գիտակցության ստադիալ զարգացման հետ, կամ արտացոլելով գիտակցության ստադիալ զարգացումը:

2. Ձևաբանությունը զարգացել է շարահյուսության մեջ շարահյուսական կառուցվածքի որակական փոփոխության հետևանքով, որ արտացոլում է գիտակցության որակի փոփոխումը:

3. Մարդկային լեզուն թե իր շարահյուսական կառուցվածքը և թե ձևաբանության կառուցվածքը ձեռք է բերել զարգացման բարձր աստիճանի վրա, նախնական շրջանում չի եղել ոչ ձևաբանություն և ոչ շարահյուսություն:

4. Բառական զարգացումն էլ ընթացել է պրիմիտիվից դեպի կատարյալը, բառերը իբրև նախադասության անդամներ և իբրև խոսքի մասեր առաջացել են լեզվի զարգացման պրոցեսի բարձր աստիճանի վրա:

Այս բոլորից երևում է, որ մարդկային խոսքի սկզբնական շրջանում բառապաշարը, շարահյուսությունը և ձևաբանությունը կազմել են մի ամբողջություն, իբրև դիֆուզ վիճակ: Ըստ Մառի բառն ու հնչյունն էլ կազմել են երբեմնի դիֆուզ վիճակ: Հետևաբար՝ լեզվի զարգացման պրոցեսը եղել է այդ դիֆուզ վիճակի անընդհատ պարզացումը: Աստիճանաբար բառն ու հնչյունը տարրերակվել են միմյանցից, ապա բառն ու նախադա-

¹ К. Маркс—К критике политической экономии, Москва, стр., 17, 1932 г.

սությունը միմյանցից, ապա ձևաբանությունն ու շարահյուսությունը միմյանցից: Ոոսքի զարգացման այդ պրոցեսում հն առաջացել մի կողմից նախադասության անդամները, մյուս կողմից խոսքի ժասերը:

Նախադասության բարդացման և հետագա զարգացման պրոցեսում բառերից մի քանիսը, հիմնականում դերանունները, ստացել են ֆունկցիոնալ արժեք և վերածվել են հոլովական և խոնարհման մասնիկների: Այդ ամենը կատարվել է յուրաքանչյուր ժողովրդի մոտ, յուրաքանչյուր առանձին լեզվի մեջ յուրատիպ և իբրև հետևանք հասարակական գիտակցության զարգացման նոր աստիճանի վրա բարձրանալու, նոր որակի: Հետևաբար լեզուն մի այլ տեղից չի կարող բերված լինել, այլ նա կազմվել է այն հասարակության խոսքի զարգացման պրոցեսում, որի լեզուն է նա:

Այս գրությունից ելնելով սովետական հայագիտությունը հետազոտում է և միանգամայն տարբեր լուսաբանություն տալիս հայերենի քերականությանը և շարահյուսությանը:

Հայերեն լեզվի քերականական և շարահյուսական ընդհանուր կառուցվածքը մի որոշ չափով նման է հնդեվրոպական տիպի լեզուներին, բայց նրանց հետ նույնական չէ: Դա հետեանք չէ նրա ազգակցության, այլ պատմական ստադիալ զարգացման: Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ հայերեն լեզուն կազմավորվել է հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, նրա հասարակական գիտակցության զարգացմանը զուգահեռ՝ արտացոլելով այդ գիտակցությունը:

Հայերեն լեզվի ձևաբանական կառուցվածքի մեջ նկատվում է մի զարմանալի օրինաչափություն, որ հատուկ է միայն հայերենին: Այդ օրինաչափությունը այն է, որ հայերեն լեզվի խոնարհիչները և հոլովիչները, որ նրա թեքականության ցուցանիշներն են, արտահայտվում են նույն մասնիկներով՝ ա, ե, ի, ու, ու: Հայերեն հոլովակազմիչները հանդիսանում են այն ցուցանիշները, որոնք վկայում են, թե ~~այս~~ հոլովումը առաջացել է կցական ստադիայից, նույնպես և հայերեն բայի դեմքի վերջավորությունները վկայում են նույնպես, թե հայերենի խոնարհումը առաջացել է կցական ստադիայից: Այսպիսով մի զարմանալի միասնություն կա գրաբարի հոլովման և խոնարհման կառուցվածքի մեջ, և երկուսն էլ վկայում են, որ հայերեն լեզուն զարգացել է կցական ստադիայից դեպի թեքական ստադիա: Այդ երևույթի գաղտնիքը գտնելու համար դիմենք գրաբարի շարահյուսությանը և փորձենք որոշել յոթ զարգացման հիմնական ստադիաները, որոնք առաջացրին հայերենի ձևաբանությունը:

Հետազոտությունը պարզում է, որ նախահայկական լեզուների հին և խորդների սկզբնական նախադասությունը կազմված է եղել մեկական բառերից, որով հիմնականում արտահայտել են տոտեմիզմի շրջանի իդեոլոգիական ըմբռնումները: Այդ բառերը հետագայում հայերեն լեզվի մեջ տրանսֆորմացիայի ենթարկվելով՝ դարձել են՝ ևական բայեր և դերանուններ: Եվ քանի որ հայերեն լեզվի նախորդները շատ լեզուներ են եղել, այդ պատճառով էլ հայերեն լեզվի մեջ նրանցից ժառանգվել են էական բայերի և դերանունների հինգ ներկայացուցիչներ, որոնք և են՝ ա, ե, ի, ու, ու: Այդ դերանուններն ու էական բայերը նախահայկական լեզուների նախորդներում կատարել են համընդհանուր ենթակայի դեր, ինչպես, օրինակ՝ ցուրտ է,

շոգ է, մութ է, լույս է, անտառ է, քուր է, սրս է, գոգասն է և այլն, և այլն: Այդ շրջանում բառն ու նախադասությունը տարբերակվել են միմյանցից և մի համալսման համար են լինում: Բնականորեն վերագրվել են գիտակցված այն բոլոր առարկաները, որոնք արտահայտվել են բառով, բայց այնպիսի բառով, որի մեջ խոսքի մասերը դեռ գիտակցված չեն: Գիտակցության մեջ կատարված առաջին հնգաշրջումը, որ անպայման հետևանք է տնտեսական կյանքի մեջ կատարված հեղաշրջման, ասենք թե հին քարե դործիքները փոխարինված լինեն հղկված քարե դործիքներով, որով բարձրացել է արտադրությունը և հասարակության տնտեսական գործունեության մեջ ընդգրկվել են բազմաթիվ առարկաներ, հասարակությունը գիտակցել է շատ առարկաներ, հնեարանական օրենքներով նրանց անուններ տվել և վերագրել մի համալսման համար ենթակայի: Ուստի, մեր կարծիքով, հայերենի էական բայով կազմված բաղադրյալ ստորոգյալի տիպը ավելի հին է, քան պարզ կամ բայական ստորոգյալի տիպը:

Հասարակական մտածողության մեջ երկրորդ հեղաշրջումը կատարվում է այն ժամանակ, երբ առաջանում է սեփական կոլեկտիվի, սեփական դործիքի. այլև սեփական իրերի հատկացական կամ պատկանելիական ըմբռնումը, ուստի այդ հին կառուցվածքի նախադասությունների վրա ավելանում են իմ, բո, իւր, հատկացական բառերը. որից առաջանում է արդեն նախադասության զիմավոր կառուցվածքը՝ զործ ի. իմ, բան է իմ, զործ է իւր, որս է իւր, բան է իւր և այլն: Այստեղ տոտեմի դերանունը՝ է-ն համընդհանուր ենթակա է, զործ, բան, որս՝ ստորոգյալներ, իսկ իմ, իր, իւր հատկացական բառերը՝ հատկացուցիչներ:

Մտածողության զարգացման երրորդ հեղաշրջումը կատարվում է այն ժամանակ, երբ անհատանում է տոտեմիզմի ըմբռնումը, հասարակական իդեոլոգիան նոր որակ է ստանում, գործողությունը աստիճանաբար վերագրվում է անհատին, այսինքն՝ իսկական ենթակային և դրա հետևանքով նախադասության կառուցվածքի մեջ առաջանում է հիմնական փոփոխություն, որտեղ «է» այլևս դերանուն չէ, այլ միայն պնդող բառ, իսկ իմ, իւր և այլ ստացական բառերը իրենց վրա վերցնում են ենթակայի փունկյիան՝ իդեոլոգիական հնթական փոխարինվում է փաստական ենթակայով, առաջանում է նախադասության այն կառուցվածքը, որ դրաբարում մենք այժմ ունենք և որ կոչում ենք պոսեսիվ կառուցվածքի կամ հատկացական կառուցվածքի նախադասություն, որի օրինակն է՝ զործեմ ի. իմ:

Այս կառուցվածքի նախադասության մեջ հրևում է նրա ավելի հին շրջանի բնույթը: Եթե այժմ տեղ նախադասությունը հասկանում ենք՝ «ես դործել եմ», այսինքն՝ իմ = ես, իսկ «է» իբրև պնդող բառ ծառայում է ստորոգյալը ենթակային կապելու համար, այսինքն՝ հանգույց բառ է, ապա հակառակ ընթերցման ժամանակ ստացվում է՝ իմ է գործեալ:

Այս շարահյուսության մեջ «իմ» բառը հատկացական է, «է» ենթակա, իսկ «գործեալ» ստորոգյալ. ստացվում է «իմ է-ն գործել է»:

Այդ հաստատելու համար հստակ գնալու պետք չկա, պետք է միայն կարգալ բոլոր դեմքերը հակառակ ծայրից:

Գործնալ է իմ	իմ է գործնալ
Գործնալ է քո	քո է »
Գործնալ է նորա	նորա է »
Գործնալ է մեր	մեր է »
Գործնալ է ձեր	ձեր է »
Գործնալ է նոցա	նոցա է »

Ինչպես տեսնում ենք՝ ստորագիծական կառուցվածքը բոլոր դեմքերի համար միշտ միևնույնն է, այսինքն՝ երբորդ դեմքի ենթակայի ու ստորագյալի սովորական համաձայնությունը գեմքով և թվով պատկերվում է։ Ինչու, Դա հասկանալի է գտնում, երբ ընդունում ենք, թե չէ՝-ն բոլոր այդ նախադասությունների մեջ ենթակա է, ուստի ստացվում է չիմ է-ն գործնալ է, քո է-ն գործնալ է, նրա է-ն գործնալ է և այլն։

Գարգ է, որ նախադասության պոսեսիվ կառուցվածքը զրաբարում կենդանի վիճակ է հայերենի շարահյուսության զարգացման այն ստադիայի, երբ հասարակական գիտակցությունը կոլեկտիվիստական գիտակցություն էր։ Դրաբարի մեջ եղած այդ կառուցվածքը վկայում է նաև, թե զրաբար լեզուն առաջացել է այնպիսի մի տիպի լեզվից, որը կոլեկտիվ հասարակական գիտակցության զբաղեցրած էր։ Հասկանալի է, որ հասարակական գիտակցության շորրորդ հեղաշրջումը, երբ անհատական արագորությունը պայմանավորում է կոլեկտիվիզմի քայքայումը և գասակարգային հասարակական հարաբերությունների հաստատումը, հեղաշրջում է նաև հայերենի (այս անգամ արգեն հայերենի՝ նոր կազմավորված լեզվի) շարահյուսական կառուցվածքը և առաջացնում զրաբարի ներպարծական կառուցվածքի նախադասության շարահյուսությունը։ Լեզվական մասերից զրա այդ նշանակում է, որ արգեն ունի կերպով գիտակցված տարբեր դեմքի ենթականեր են առաջանում լեզվի մեջ, որոնք են՝ ես, դու, նա, մեք, դուք, նրանք, որովհետև նրանք գիտակցության մեջ որեէ հենարան չունեն և կոչում են կամ ստանում նոր ֆունկցիա՝ վերածվելով էական բայի դեմքի վերջավորությունների։ որ ավելի լավ երևում է էական բայի անցյալի ձևերի մեջ՝ է-ի (մ), է-իք (իւր), է (յր >իւր> իւր)։

Այսպես առաջանում է հայերեն լեզուն իր էական բայի խոնարհման հետ միասին և դա է, որ գտնում է համընդհանուր լեզվական կառուցվածքի կազմավորված զրաբարի և բարբառների համար, դա է, որ իր որակով հայերեն լեզվի մի մասն է։ Այնուհետև հայերենի խոնարհումը կազմվում է գոյականների ու ածականների մարդջական ձևերին այդ էական բայը ցվելով, որից ստացվում է՝ գործնի (ի գործի էի), գործնիր, գործնիք և այլն։

Այսպես առաջանում են հայերեն լեզվի խոնարհման այն մասնիկներ, որոնք հնգեվորաբանները համարում են բերովի կամ թե անբացարկի ու առեզմվածային։¹ Նույն կարգով էլ ապացուցված է, որ հայերենի նույնպիսի առաջացել է երբորդ դեմքի գերանվան ձևերի կցումով գոյականին ու ածականին։ Եվ քանի որ էական բայերի ու գերանունների ազումը նույնն է, երկուսն էլ հասնում են առեմիզմի գիտակցության լրջանին և այդ շրջանի գիտակցության մեջ նույնացված են եղել, այդ

¹ A. Meillet, Esquisse etc., p. 83 և այլ տեղեր։

պատճառով էլ հայերեն լեզվի դերանուններն ու օժանդակ բայերի արմատները նույն են (ա, ե, ի, ո, ու)։ Բրա հետևանքով էլ հայերենի խոնարհիչներն ու հոլովիչները նույնն են՝ ա, ե, ի, ո, ու։

Այստեղից սովետական հայագիտությունը պնդում է, որ հայերեն լեզուն առաջացել է Հայաստանի տերիտորիայում միայն ու միմիայն հայ ժողովրդի գիտակցության մեջ, հայ ժողովրդի նախորդների գիտակցության զարգացման և հայ ժողովրդի կողմից այդ գիտակցությունը ժառանգելու և նոր աստիճանի վրա, արդեն հայկական աստիճանի վրա բարձրացնելու հետևանքով։ Եվ այնպես, ինչպես ինժեները կառուցում է իր ճարտարապետական հղացումը այլ և այլ նյութերից, այդպես էլ մեր ժողովուրդը իր լեզվի կառուցումը կատարել է այլ և այլ նյութերից և՛ իր նախորդների՝ տեղական ցեղերից ժառանգած լեզվական նյութերից, և՛ իր նախորդներից ուժանց Հայաստան ներգաղթելու հետևանքով Եվրոպայից կամ Ասիայից կամ այլ և այլ տեղերից բերված նյութերից, և՛ իր հարեւաններից փոխառնված լեզվական նյութերից։ Ինչպես ինքն է ուրիշից փոխ առել, այնպես էլ ինքը ուրիշին սովել է, եթե գրա կարիքը հարևան կազմավորվող վրացի, ադրբեջան, պարսիկ և այլ ժողովուրդները ունեցել են։ Այդ է պատճառը, որ հայերեն լեզուն նման տարրեր ունի մոտիկ ու հեռու հարևանների հետ։

Այսպես է սովետական հայագիտության այս երկրորդ դրույթը։

3. Սովետական հայագիտությունը զբաղվել է հայոց լեզվի պատմությունը կառուցելու հարցերով ևս։

Այդ պրոբլեմը հին հայագիտությունը լուծում էր ըստ իր ընդհանուր տեսության։ Այսպես, ըստ հին հայագիտության՝ հայերենի նախնական վիճակը ներկայացնում է գրարարը, որով խոսել են բոլոր հին հայերը մինչև 12-13-րդ դարերը։ Այդ գրարարի ազավազման հետևանքով առաջանում են միջին հայերենը և բարբառները, այսինքն թե՛ գրարարի ծնունդն է միջին հայերենը և հայերեն բոլոր բարբառները, այլև աշխարհաբար հայերենը։ Այսպիսով հայերենի պատմությունը «բարձրորակ» գրարարի անընդհատ անկումն է՝ դեպի բարբառային «ցածր որակը»։ Այդպիսի պատմություն և այն էլ լեզվի պատմություն ընդունելի չէ, որովհետև լեզվի պատմությունը հասարակական գիտակցության պատմությունն է, իսկ հասարակական գիտակցության պատմությունը հասարակական տնտեսական կյանքի պատմության անդրադարձումն է կամ արտացոլումն է, իսկ գա անընդհատ ղեգրադացիայի ենթարկվող երևույթ չէ։

Ուստի սովետական հայագիտությունը չի ընդունում, որ դասակարգային հասարակության մեջ կարող է լինել համընդհանուր միասնաբար մեկ լեզու։ Դասակարգային հասարակության մեջ գոյություն են ունենում դասակարգային լեզուներ, որոնք իրար հակադրվում են այնպես, ինչպես հասարակության կյանքի մեջ այդ դասակարգերը միմյանց հակադրվում են։ Այսպես՝ ըստ սովետական հայագիտության՝ լեզվի զարգացումը չունի անբացատրելի, իմամեննա հատկություն, այլ գա անընդհատ, միմյանց հակադրվող և միմյանց մեջ ներթափանցված տարբերակների խաչավորման պրոցես է ներկայացնում։ Ըստ մեր գրույթի մարդկային խոսքը սկսվել է բազմալեզվությունից, որ անընդհատ փոխադարձ խաչավորման հետևանքով զնուկ է դեպի քչալեզվություն կամ միալեզվություն։ Արդ, ուրևմ, այդ

բաղմալեզվության մեջ տարբերակները հակադրված են միմյանց և գտնվում են անընդհատ պայքարի մեջ՝ բախման, խաչավորման, որով և հանդում են համադրության լեզվական նոր աստիճանի վրա։ Երա հետևանքով բազմաթիվ տարբերակվող լեզուներից կամ լեզուների տարբերակներից համադրվում են փոքրաթիվ, բայց մեծ լեզուներ։ Այդ մեծ լեզուները սովորաբար կազմվում են դասակարգային հասարակության ժամանակ, ծավալվորվելով դասակարգային լեզուներով, որտեղ իշխող դասակարգի լեզուն իր դիմաց ունենում է ժողովրդական բազմաթիվ բարբառները։ Այդ ժամանակվանից սկսած ժողովրդական բարբառները իբրև աշխատավոր և շահագործվող դասակարգի լեզուներ հակադրվում են իշխող ազնվականության լեզվին, կազմելով նրա հետ միասնական մի ընդհանուր էթնիկական լեզու։ Իրանց անընդհատ խաչավորումը, անվերջ պայքարը և առանձին հատմածներով և առանձին փաստերով, լեզվական առանձին իրակություններով ընդհանրանալու անընդհատ պրոցեսը հանդեցնում է մի նոր որակի լեզվի առաջացման, երբ իշխող դասակարգը իր տեղը դիջում է մի նոր իշխող դասակարգի, ևախորդող իշխող դասակարգի լեզուն մնում է իրրեկուլտուրական ժառանգություն։ Գազմավորվում է նոր հասարակություն իր նոր միասնական լեզվով, որտեղ նոր իշխող դասակարգի լեզուն, որ համադրված է նախորդի լեզվից և ժողովրդական բարբառներից, որ ավելի դեմոկրատական է, ավելի մոտ ժողովրդականին, հակադրվում է դոյությունը շարունակող ժողովրդական բարբառներին և դրանց հետ անընդհատ ներթափանցման ու խաչավորման պրոցեսի մեջ գտնվում։ Այդ խաչավորումն է, որ անընդհատ կենսական ուժ է տալիս լեզվին և նրա դարգացմանը։ Չենք ժխտում և ոչ միայն չենք ժխտում, այլև պնդում ենք, որ այս ներքին խաչավորման պրոցեսին զուգընթաց տեղի է ունենում նաև արտաքին խաչավորման պրոցես, ուրիշ լեզուների հետ խաչավորվելու պրոցեսը բառափոխառումներով և երբեմն ձևափոխառումների միջոցով։

Այդ սկզբունքից ելնելով, էլ սովետական հայագիտությունը հայոց լեզվի պատմությունը դիտում է որպես հակադրությունների պայքարի պատմություն, բաժանելով այն չորս հիմնական փուլերի։ Այդ փուլերից առաջինը առնվում է դրերի դյուտից մինչև 12-րդ դարը։ Այդ շրջանում զրականության մեջ միակ տիրապետողը ազնվականության դասակարգային լեզուն էր, գրաբարը, որը մեր հին հեղինակները կոչում են ոստանիկ լեզու։ Գրաբարի կոչքին, նրան իբրև հակադրություն, գոյություն ունեին հայերենի մեծաքանակ բարբառները։ Այդ բարբառների և գրաբարի հակադրամիասնությունը կազմում էր հայ էթնիկական լեզուն։ Գրաբարն ու բարբառները փոխադարձ անընդհատ խաչավորումներով մեկը մյուսի վրա ազդում էին, մեկը մյուսին հարստացնում, մեկը մյուսի հետ ավելացնում իրենց հարստությունները։ Չնայած գրաբարի դիմադրության՝ բարբառները ազդում էին այդ գրաբարի վրա և սնում նրան իրենց կենսարար ակունքներից, որով և դրաբարը մնում է կենդանի, Բայց քանի որ հին ֆեոդալ դասակարգը հակադրվում էր հայ գյուղացիությանը, ուստի նրա դասակարգային լեզվի սիստեմը հիմնական փոփոխության չէր ենթարկվում, այլ միայն կրում էր բարբառների լոկ ազդեցությունը։ Հայ հիս ֆեոդալական հասարակությունը ներքին և արտաքին հակասություններից, ինչպես և արտաքին ուժերի նվաճումների մոլորմից կործանվում է, ոչնչա-

նում է հայ ֆեոդալական դասակարգը, իր հետ տանելով գրառարի կենդանությունը: Դրաբարը մնում է միայն գրի լեզու, «ոստանիկ» լեզուն դառնում է «գրառար» Զէ՝ որ ճշմարտություն է, որ «շահագործողները գալիս ուղնում են, անմահ է մնում միշտ ժողովուրդը»: Ուստի հայերեն բարբառները պահպանում են իրենց գոյությունը, մնում են իրեն ժողովրդական խոսակցական լեզուներ նաև գրառարի «մահից» հետո: 11—12-րդ դարերում Հայաստանում փոփոխվում են հասարակական հարաբերությունները. այդ դարերից սկսվում է հայկական ֆեոդալիզմի քայքայման գարաշրջանը: Հասարակական շահագործական հարաբերությունները չեն վերանում, նրանք վերարտադրվում են ֆեոդալիզմի քայքայման տիպի որակով և առաջացնում ճորտատիրական դասակարգ, իբրև հայ հասարակության իշխող դասակարգ, որ իր ծագումով տարբեր է՝ և՛ ազնվականությունից առաջացած, և՛ առևտրականությունից առաջացած, ուստի և այդ նոր իշխող դասակարգի համար գրառարը մեռած լեզու էր: Բայց տիրելով հայ հասարակական կյանքի նյութական հարստություններին, այդ դասակարգը ժառանգում է նախորդի կուլտուրական հարստությունները ևս, որոնց թվում և գրառար լեզուն, որը համադրելով կենդանի խոսակցական լեզվին, հայ բարբառներին, առաջացնում է մի նոր տիպի գրական լեզու՝ միջին եաջերեն, իր առանձին որակով: Այդ լեզուն պահպանվում է հայ հասարակության գրական անդամատանում մինչև 17—18-րդ դարերը: Այս է հայոց լեզվի պատմության երկրորդ փուլը:

19-րդ դարում հայ հասարակությունը ապրում է հարաբերությունների նոր քեկում: Տնտեսական արտադրական կյանքում առաջանում են կապիտալիստական հարաբերություններ: Կազմավորվում է հայ բուրժուազիան, որի հասարակական հարաբերությունների ամրապնդման համար զգացվում է համազգային հասկանալի լեզվի անհրաժեշտություն: Առաջանում է աշխարհաբար գրական հայերենը և հաստատվում է գրական անդամատանում: Այդ լեզուն համադրվում է կրկին առկամ բարբառներից, միջին հայերենից և գրառար լեզվից: Այդ լեզվի տիրապետման ժամանակաշրջանում շարունակում են պահպանել իրենց գոյությունը հայերենի բարբառները, իրենք այդ նոր լեզվի հետ՝ կազմում են հակադրամիասնություն: Շարունակելով հակադրվել այդ գրական լեզվին՝ նրանք խաչավորվում են նրա հետ, անում նրան և առաջ մղում նրա մշակման գործը: Այդ լեզուն կատարում է իր հասարակական դերը՝ միաժամանակ կուլտուրապես բարձրացնելով մեր բարբառային ժողովրդին, դաստիարակում է նրա ինտելիգենցիային, սակայն այդ գրական լեզուն չէր կարող դառնալ համընդհանուր, համաժողովրդական գրական լեզու, որովհետև բուրժուական հասարակարգում ժողովրդական զանգվածները հեռու են պահվում և՛ նյութական և՛ կուլտուրական բարիքներից: Այս ամենից նրանք ստանում են այնքան, որքան դա ցանկանում է բուրժուազիան: Ուստի ժողովուրդը անընդհատ պայքարի մեջ է բուրժուազիայի հետ այդ նյութական և կուլտուրական բարիքների համար: Այդ տևում է մինչև 19-0 թիվը: Այդ է մեր լեզվի պատմության երրորդ փուլը:

Ազատարար Հոկտեմբերի լույսի ճաճանչները իջնում են նաև հայ ժողովրդի վրա, նրա դարավոր պայքարը իր ստեղծած նյութական և կուլտուրական բարիքներին տեղ դառնալու համար պսակվում է հաջողությամբ:

Ռուսաստանի շահագործող դասակարգերի հեա միասին ոչնչանում են նաև հայ շահագործող դասակարգերը, և մեր ժողովուրդը մանում է Սովետական Մեծ Ժողովրդի ընտանիքի մեջ, առնում է իր ձեռքը իր պետության և իր սեփական բախտը, դառնում է սեփականատեր իր ստեղծած նյութական և կուլտուրական բարիքների:

Սկսվում է հայոց լեզվի պատմության չորրորդ փուլը՝ սովետական փուլը, երբ գրական լեզուն դառնում է համաժողովրդական սեփականություն, դառնալով սովետական հայ պետականության լեզու: Այս փուլում բարբառները այլևս չեն հակադրվում գրական լեզվին որպես դասակարգային լեզուներ, այլ դառնում են նրա անկատար տարբերակներ, որոնք պատրաստ են տալու իրենց համար ընդհանուր դարձած գրական լեզվին իրենց կենսական հյութերը և տեղի տալու՝ մեռնելով կամ աստիճանաբար մոռացվելով հայ գրական լեզվով խոսող ողջ հասարակության կողմից: Այսպես լուծվում են այն հակասությունները, որոնք սկսվել էին Հայաստանում գոյություն ունեցող լեզուների մեջ նախահայկական շրջանում և որոնք շարունակվեցին մինչև սոցիալիզմի օրերը, երբ այդ տարբեր լեզուները վերածվելով հայերենի տարբերակների՝ բարբառների, հանգեցին այն մեծ սինթեզին, որը կոչվեց սովետական հայերեն գրական լեզու:

Այսուհետև մեր գրական լեզուն պիտի ապրի որպես համաշխարհային, համամարդկային լեզվի մի տարբերակ, որ լուծվելու է համաշխարհային լեզվի մեջ մյուս բոլոր լեզուների հեա միասին:

Այսպես է լուծվում սովետական հայագիտությունը հայոց լեզվի պատմության խնդիրները՝ Իս չէ և չի կարող նման լինել հին հայագիտությանը, այլ, ինչպես տեսնում ենք, կազմում է նրա ուղղակի հակադրությունը:

4. Սովետական հայագիտությունը զրադվել է նաև բարբառների հարցով: Հակադրվելով հնդեվրոպաբանությանը, ըստ որի բարբառների առաջացումը դիտվում է որպես բարձրաակ դասական լեզվի դեգրադացիայի արդյունք, սովետական հայագիտությունը, ելնելով էնգելսյան դրույթից, հայ բարբառները դիտում է որպես նախահայկական առանձին ու անկախ ցեղական լեզուների վերապրուկներ, որոնք ապրում են անընդհատ միավորվելու և նմանվելու պրոցես: Երևան են բերված լեզվական օրինաչափություններ, որոնք անկախ լեզվի հատկության նշաններ են, և այդ հիման վրա ոչ միայն հայտնագործվել է բարբառների մի նոր ճյուղ, որ հարստացրեց Հ. Աճառյանի կողմից կատարած հայ բարբառների դիտա-

¹ Ա. Ղաբիրյան—Ներածություն հայոց լեզվի պատմության, 1932 թ., Ա. Ղաբիրյան—Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1935, 1937 թ.թ. Ա. Ղաբիրյան—Համառոտություն հայ բարբառագիտության, 1941 թ. Ա. Ղաբիրյան—Նյութեր հայոց լեզվի պատմությանից, 1945 թ. Ա. Ղաբիրյան—Հին և նոր հայագիտություն, 1946 թ. Գ. Սեվակ—Հայոց լեզվի տեսություն, 1938 թ. Ա. Ղաբիրյան—Գրաբարի կազմավորումը, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր № 3, 1945 թ. հասարակագիտ. սերիա. Ս. Ղազարյան, —Հայոց լեզվի բաղադրուցիչ մասերը, Հայկական ՍՍՌ ԳԱ Ն. Մատի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների մեթոդական, հատ. 1:

² Ա. Ղաբիրյան—Հայ բարբառների մի նոր ճյուղ, Հայկական ՍՍՌ Վ. Թ. Թումանյանի անվան Գեաական Համալսարանի գիտական աշխատություններ, հատ. XI, Երևան, 1939 թ.:

կան դասակարգում¹ այլև հնարավորություն ստեղծեց կատարելու հայրաբարրաւորի հնչյունական դասակարգումը։ Այդ դասակարգումը մի հաջող բանալի է հայ ժողովրդական լեզուների պատմությունը հասկանալու և զրելու համար²։ Այդ դասակարգման արժեքները առանձնապես երևան կգան այն ժամանակ, երբ սովետական հայագիտությունը կծավալի հայրաբարրաւորի և նրանց պատմության ուսումնասիրության աշխատանքները։

Ծ. Սովետական հայագիտությունը գրադվել է ոչ միայն հայոց լեզվի տեսական և պատմական հարցերով, այլև գործնական հարցերով։ Եթե այդ ամենը, ինչ որ ասացինք, լեզվի պատմություն ու տեսություն էր և ուներ մի հիմնական նպատակ՝ հայերեն լեզվի մատերիալի վրա բազմաթիվ փաստերով հաստատելու պատմական մատերիալիզմի և դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների անվիճելիությունն ու ճշմարտությունը, ապա սովետական հայագիտության աշխատանքները ուղղված էին նաև գործնականի կողմը, ելնելով հենց իր տեսությունից։

Ուստի սովետական հայագիտության կարևոր նպատակներից մեկը եղել է՝ լուծել հայոց լեզվի առօրյա հարցերը, իր այդ տեսությունը կիրառել պրակտիկայում, արտադրության մեջ, իսկ լեզվաբանության արտադրությունը լեզվաշինարարության և դպրոցական ընդգլխուններն են։

Տեսականորեն հիմնավորված հայոց լեզուն անհրաժեշտ էր գործնականորեն ուսուցանել դպրոցներում, բայց այնպես, որ այդ ուսուցումը լինի ոչ միայն լեզվի ուսուցում, այլև ծառայի մանուկ սերնդի կոմունիստական դաստիարակության նպատակներին։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր վերակառուցել նաև քերականության տեսությունը և գործնականը։

Հայ քերականագիտության մեջ իշխում էր ֆորմալ հոգեբանական շկոլան, որը հանդիսանում էր հիմնականում գերմանական լեզվաբանության մլադոգրամատիզմի արտահայտությունը քերականագիտության մեջ ընդհանրապես։ Այդ շկոլայի ներկայացուցիչն էր մեղ մոտակադիմիկոս Մ. Աբեղյանը, որի քերականական հայացքները իշխում էին 1906 թվից մինչև 1932 թվը։ Սովետական հայագիտությունը, ելնելով մարքսիզմի-լենինիզմի փիլիսոփայական հիմունքներից և սովետական լեզվաբանության նվաճումներից, անհաշտ պայքար ծավալեց այս ուղղության դեմ, հիմնավորեց ու հաստատեց ռուսական սովետական քերականագիտության ուղղությունը, որի ելակետները դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքներն էին։ Այդ ուղղության տեսական հիմունքները մեզ մոտ մշակվեցին 32—40-ական թվականներին։ Չմոռանալ հիշատակելու, որ այս հարցերում հիմնական դեր կատարողներից էր ընկեր Գ. Սևակը³ 1934 թվին, պայքարի ամենարուսն շրջանում, լույս տեսավ հայոց լեզվի քերականության գասագիրքը⁴ մի երկու տարի հետո հայոց լեզվի շարահյուսության դասա-

¹ Ա. Ղարիբյան — Համառոտություն հայ բարբառագիտության, Երևան, 1941 թ.

² Ա. Ղարիբյան — Հայ բարբառների դասակարգման պրոբլեմը, Հայկական ՍՍՌ-ի Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի գիտական աշխատություններ, հատ. XIX, 1934 թ.

³ Գ. Սևակ — Մերենքների կոմիտե քերականագիտության մեջ, Կուլա. Ֆրոնտ № 33, 34, 1934 թ. Գ. Սևակ — Հայոց լեզվի տեսություն, 1939 թ. Գ. Սևակ — Խոսքի մասերի մասերը, Հայկական ՍՍՌ-ի Մ. Մոլոտովի անվան Պետական Համալս. գիտական աշխատություններ, հատ. XI:

⁴ Ա. Ղարիբյան — Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1934 թ.

գիրքը¹, որոնք մինչեւ իմա ձուլւած են մեր գորոցական կայուն գաղափարները: Այս գաղափարների շխուհական ելակետներն էին.

ա) Խոսքի և նախադասութեան տարբերակումը, որ ելնում է մարքայան աշխատանքից, որ լեզուն իրական, գործուն գիտակցութեան է:

բ) Նախադասութեան մեջ ենթական ու ստորոգյալը իրեն գլխավոր անգամներ ընդունելը, անգամներ, որոնք լեզվի մեջ գրեւորում են օրեկտիվ տեսլականութեան շանդիտացող տարեկայի և իր շարժման միատեղական ըմբռնման գիտակցումը:

գ) Խոսքի մասերի և նախադասութեան անգամների տարբերակումը, իրեն լեզվական մասնագրութեան բարձր ստադիայի՝ գիտելիքի տադիայի տրամաշարութեան:

Այս շարքերի տեսական պայագանութեանը շարադրութեան տվեց լուծելու բազմաթիվ երկրորդական խնդիրներ. շարքերի շուրջների խնդիրը, խոնարհման սխառնմի, խնդիրը, բայական կառուցվածքի խնդիրը և այլն:

Ու թե քերականական և թե լեզվաբանական տեղական ու պատմական շարքերը պետք էր մասնաշարեն ծանոթացնել մեր՝ ուսուցչութեանը և գործնել նրանց շարժար գործնական աշխատանքի ելակետներ, այլև պետք էր ցույց տալ նրանց՝ քերականութեան այդ նոր գրվածքի ուսուցման եղանակները գորոցում: Դա նշանակում էր լեզվաբանական նվաճութեանը կիրառել տրամադրութեան մեջ: Այդ պատճառով էլ սովետական յայտագրութեան աշխատանքները գրադվեցին նաև գորոցի շարքերով, լեզվի ուսուցման շարքերով գորոցներում ու մշակեցին յայտց լեզվի տվանդման սովետական մեթոդիկան, և այնտեղ եւ գերմանական ուղղութեանը փոխարինելով տեսական սովետական ուղղութեամբ:

Համեստ են սովետական յայտագրութեան նվաճութեանը, բայց շամեստ թիվ են կազմում նաև նրա գոյութեան տարիները: Սակայն սովետական յայտագրութեան մեծ նվաճութեան են այն կադրերը, որոնք այժմ նվիրված աշխատում են այդ գիտութեանը մշակելու գործում:

Առաջնորդելով Համադիութեան կոմունիստական (բուլեիկների) Պարաիայի կենտրոնական կոմիտեի պատմական որոշութեանով իգելուգիական շարքերի մասին, շենվելով Հայաստանի կոմունիստական (բուլեիկների) Պարաիայի կենտրոնական կոմիտեի անտատան օգնութեան վրա, Հայաստանի յայագետները կշարունակեն իրենց անդիջող պայքարը իգելուգիական յայագրութեան ուղղութեանը գեմ, եվրոպական կուլուրայի նկատմամբ գոյութեան ունեցող ստորաքարութեան գեմ, էլ տվելի մեծ եռանդով կմշակեն սովետական յայագրութեան տեսական շխուհները, մրաջան մեզվի պես կնազաքեն մեր կուլուրայի բոլոր շարտութեանները, կարծեքավորեն, կկապեն մեր շարեան ու եղբայրական ժողովուրդների կուլուրայի շեա, կնաադատեն և, տաջ մղելով, կաանեն սովետական յայագրութեանը գեղի նոր ու նոր նվաճութեան, գեղի գիտութեանների գիտութեան՝ մարքսիզմ-լենինիզմի լուսաշող բարձունքները:

¹ Գ. Սեվակ-Հայոց լեզվի շարտագրութեան, Երեան, 1937 թ.

² "Նաբիլյան-Հայոց լեզվի մեթոդիկա, 1938 թ. Մարենի լեզվի մեթոդիկա, 1941 թ. Հայոց լեզվի մեթոդիկա, 1947 թ.